Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Օ Ր Ե Ն Ք Ը
«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Հոդված 8. Հիմնական սոցիալական ծառայությունները

1. Հիմնական սոցիալական ծառայություններն են՝
1) խորհրդատվական օգնությունը.
2) վերականգնողական օգնությունը.
3) բնաիրային օգնությունը .
4) կացարանով ապահովելը.
5) խնամքը.
6) իրավական օգնությունը.
7) օրենքով սահմանված կենսաթոշակներ, նպաստներ և այլ դրամական վճարներ նշանակելը և վճարելը.
7[1]. «կոմունալ վճարների դրամական փոխհատուցումը.
8) օրենքով սահմանված զբաղվածության ծառայությունները և բժշկասոցիալական փորձաքննության բնագավառում ծառայությունները.
9) օրենքով չարգելված այլ սոցիալական ծառայություններ:

Հոդված 11. Բնաիրային օգնության և կոմունալ վճարների դրամական փոխհատուցման տրամադրումը~~Բնաիրային օգնությունը և դրա տրամադրումը~~

1. Բնաիրային օգնությունն անձի հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու (կյանքի դժվարին իրավիճակը կանխարգելելու և (կամ) հաղթահարելու) նպատակով անձին (ընտանիքին, այլ սոցիալական խմբին) տրվող օգնությունն է:
2. Բնաիրային օգնությունը տրամադրվում է սննդի կազմակերպման, հագուստի, կոշիկի, հիգիենայի միջոցների, երեխաների խնամքի պարագաների և առաջին անհրաժեշտության այլ ապրանքների, հատուկ տրանսպորտային միջոցների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով:
3. Բնաիրային օգնության տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:
4. Կոմունալ վճարների դրամական փոխհատուցումը տրամադրվում է միայնակ տարեցներին՝ նրանց կողմից սպառված գազի և էլեկտրաէներգիայի գումարը փոխհատուցելու նպատակով:
5. Կոմունալ վճարների դրամական փոխհատուցման տրամադրման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: